

ՀԱՐԱՆԼԵՂԻ ԳԻՒՂԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱՌՈՒԹԻՒՆ

Ներքին-Նարանը.—(62°58'15"—40°08'31").—Փռուած է լճափի հարթ տարածութեան վրայ և բաւական գեղեցիկ տեսք ունի, որովհետև ծածկուած է ծառերով: Բռնում է 20 դես. 1650 ք. ս. տարածութիւն, ունի մի քանի կանոնաւոր փողոցներ, որոնցից մինի կողքով հոսում է ջրադաշի մի առու կան մի քանի գեղեցիկ աներ, գեղեցիկ է, մանաւանդ, պետական դպրոցական շենքը. վատ չէ և գիւղական գատարանը: Գիւղի եկեղեցին թէպէտ հին է, սակայն վերանորոգուած է և բաւական լաւ: Մի հին աւեր եկեղեցի էլ գիւղի հարաւային ծայրում կայ, որի հիւսիսային դրան մօտ կանգնացրած մի խաչքարի վրայ մնում է հետեւել արձանագրութիւնը.

'ի Արջի եպիսկոպոսութեան Տեառն Շմաւոնի Սիւնեաց եպիսկոպոսի, ես Գրիգորս կանգնեցի զիսաչս ի փրկութիւն հոգւոյ եղբաւըն իմոյ Սամանգիւլին:

Այս գիւղը հնումը կոչուել է Ներքին Կղնուատ: Այժմ ընակավայր է այս ոստիկանական շրջանի ոստիկանի: Բնակիչները գաղթել են Ալաշկերտի Մանկասար գիւղից: Ընդամենը՝ 215 տուն են, 895 ար. 859 իգ. ի միասին՝ 1754 հոգի: Պարագմունքը նոյնն է: Ունին 999 դ. 858 ք. ս. վարելանող և 1923 դ. 2017 ք. ս. արօտատեղի: Գիւղի լճափին ձկնորսութիւն անելու իրաւունքը գիւղացիներին է պատկանում: Պէտք է ասել, որ գիւղի տընտեսական դրութիւնը ուրիշ գիւղերի համեմատութեամբ՝ լաւ է: Կան մի քանի բաւական հարուստ խանութներ, նաւթի շտեմարան և շաքարի պահեստ: Կան նաև մի քանի հարուստներ, որոնց իւրաքանչիւրի կարողութիւնը կարող է հասնել 30—40,000 բուրլու:

Աւղալ-Աղալու.—(62°59'30"—40°08'16").—Փռուած է մի ընդարձակ գաշտի վրայ՝ ծովից կը կիլոմետր հեռու և բռնում է 13 դես. 1200 ք. ս. տարածութիւն: Գիւղում ուշադրութեան արժանի առանձին ոչինչ չկայ, միայն գիւղի հարաւային կողմում, մօտ երկու կիլոմետր հեռու կայ մի գիւղատեղի, որի աւեր եկեղեցին յայտնի է Ջորի սուրբ Աստուածածին անունով, և որի մէջ ապաստանելով Մանուշակ անունով մի հայ աղջիկ՝ ապատուել է այս գիւղը ասպատակող լեզգիներից:

Գիւղացիները Ալաշկերտի զանազան գիւղերից են. ընդամենը 79 տուն, 416 ար. 403 իգ. ի միասին՝ 819 հոգի: Պարագմունքը նոյնն է: Ունին 715 դ. վարելանող և 350 դ. 2038 ք. ս. արօտատեղի: Գիւղի լճափին ձուկ որսալու իրաւունքը պատկանում է գիւղին:

Ալիքը ըստ հայության՝ համարվում է 150° 1' 15" — 40° 7' 28"). — Տեղաւորուած է միմեանց ընդհարուող լեռների լանջերին և բռնում է 21 դ. 1200 ք. ս. տարածութիւնու իւր նեղ և ծուռն ու մուռ փողոցներով, զիսատներով, քակորի շամրոցներով։ միանգամայն նման լինելով այս գաւառի միւս գիւղերին, կարող ենք միայն անել, որ Պօդոս Պօտրոս կոչուած միակ հասարակ եկեղեցու սեղանի աջ կողմում մի խաչքարի վրայ արձանագրուած է.

Ի ժամանակու Շմաւոն արհ եպիսկոպոսի Սիւնեաց՝ ես Ներսէս քնյայ կանգնեցի զիսաչս հաւը իմոյ Ստեփաննոս քնյի թվ. ԶԿԱ (=1512).

Նոյն եկեղեցու պատի մէջ գրուած է նաև մի ուրիշ գերեզմանաքար, որի վրայ քանդակուած է մի ձի, մօտը՝ մի մարդ, ձեռին՝ մի գաւ, մի թիչ վերև կլոր հացերը Փոքր ինչ հեռու՝ մի ուրիշ մարդ, մօտը մի մահակ և ոչխարը խուզելու մի մկրատ։ Այս նկարի ներքեւում արձանագրուած է.

Այս է հանգիստ Տրունին, որ է որդի Գալուստ քահանային։

Դիւլի արևմտեան կողմում բարձրացող լեռան գաղաթին նկատելի են մի ամրոցի հետքեր, փոքր ինչ ներքե՞ւ՝ մի աւեր վանք, որ այժմ յայտնի է ո. Հոփիսիմէի անունով և ուխտատեղի է։ Այս տեղից ներքև, ձորակի մէջ կայ մի հին ձիթեհանք, և սրա հանգէպ, ժայռի կրծքին մի արձանագրութիւն։

Թվ. ԶԻ (=1471). Յանուն Ա. ես Տիրոտս կանգնեցի զիսաչս յիշատակ հոգւոյ իմոյ. Ճ. տարի ապրեցա զինաւոր. ով կարդէք յաղաւթս յիշեցէք։

Սրանից ներքին կան մի քանի գերեզմանաքարեր։

Փոքր ինչ էլ արևմտահիւսիս կայ մի աւեր եկեղեցի և շուրջը՝ գերեզմաններ, ուր մի խաչքարի վրայ կարդացւում է։

Թվ. ԶՂԶ (=1547). խաչս բարեխաւս է Դաւթին։

Խակ գիւղի արևելեան կողմում, ճանապարհի կողքին կանգնած մի խաչքարի ճակատին գրուած է։

Ի թվին Հայոց ԶԺԹ (=1470). Ես Շայնշայ որդի Զոցէ կանգնեցի զիսաչս յիշատակ հոգոյ իմոյ ով կարդէք ողորմի յիշեցէք։

Պատուանգանի վրայ։

Ես Շայնշահ և իմ որդի Աւաք զՈրբոյծն թողաք... .

Աւելի ուշագրաւ է արևմտեան ձորում կանգնած «Զօրաւոր

իացը, որին ուխտ են զնում գլխաւորապէս ամուլ կանայք։ Սա մի գեղեցիկ խաչքար է, որ վերջին ժամանակներս բահանայի կարգադրութեամբ բերել կանգնեցրել են կռապաշտական ժամանակներից մնացած մի ժայռի զագաթին, որի մէջ փորուած է երկու կողմից անցք բաց արած։ Ամուլ կանայք երեխայ ունենալու տենչով ուխտ են դալիս այս ժայռին և երեք անդամ անցնում այդ ժակի միջով։

Ալիղըռլիսի բնակիչները գաղթել են Ալաշկերտի Ուչ-Բիլիսա գիւղից. ընդամէնը 174 տուն են, 845 ար. 736 իգ. իմիասին՝ 1581 հոդի։

Պարապմունքը նոյնն է, Ունին 1575 դ. 2120 թ. ս. վարելահող և 560 դես. արօտատեղի։

Զօրախար՝ կամ Զօրախաչ, հնումը՝ Ակնախառ (620 շ. 25'—400 Դ. 35'). Տեղաւորուած է Ալիղըռլիսից մի կիլոմետր զէպի առենելահիւմիս, մի բարձրաւանդակի վրայ, և շատ գեղեցիկ տեսք ունի, որովհետև ծածկուած է ծառերով և առաջում բացւում է լիճը իւր բոլոր հրապոյրով։ Գիւղը փոքր է և բռնում է միայն 7 դ. 2100 թ. ս. տարածութիւն։ Գիւղի այժմեան անունը՝ Զօրամեծ կամ Զօրազօրաւոր խաչ՝ յառաջացել է այս, յիրակի, մեծ խաչից, որ կանգնած է գրեթէ գիւղի կենտրոնում։ Սա 5 մետր բարձրութեան և մէկ մետր լայնութեան միատարր մի սկ խաչքար է, ուշագրաւ՝ ոչ թէ քանդակի նրբութեամբ, այլ միայն քարի մեծութեամբ։ Սա հաւանականօրէն մինի գերեզմանի վրայ է կանգնեցրած։ Վերան հչ մի արձանակրութիւն չէ եղել, այժմ միայն գիւղի քահանան այս խաչի յետնում շատ անգրագէտ ձևով արձանագրել է տուել մի քանի տարի առաջ պատահած թանգութեան մասին։ Այս խաչքարի մօտ կան մի քանի ուրիշ խաչքարեր և տապանաքարեր։ Վերջիններիցս մինի վրայ՝ որ մօտ է վերոյիշեալ մեծ խաչքարին՝ արձանագրուած է։

Այս է շիրիմ հանգստեան իմոյ Հասան Տաւղաշինիս, թոռին իւանոյ և որդւոյ Որդորին թերակատար ի Քո փոխեցայ, և Ած զիւր ողորմութեան լոյսն ի հանդիսաւ իմ ծագեաց. ով կարդէք, ողորմի յիշէք. թվ. ԶԵԿ (=1304)։

Այս մեծ խաչքարից զատ՝ կարելի է յիշատակել նաև մի հասարակ հկեղեցի, մի խարիսուլ մատուռ և բաւականաչափ հին խաչքարեր և գերեզմանաքարեր՝ գիւղի զանազան մասերում ցըռուած, որոնցից մի քանիսի վրայ կարդացուած է։

1) Յանուն Այ ես Դաւիթ երէցս կանգնեցի զխաչս հոգոյ իմ, ծնողաց իմ թվ. ԶԴԱ. (=1342).

2) Ես Շմաւոն եպիսկոպոս իմով ձեռամբս կազմեցի զխաչս. թվ. Զ. (=1451).

3) Ես Լիպարիտս կանգնեցի զխաչս հոգոյ փրկութեան Տիրատրին թվ. ՁԺԸ. (=1468)

Բնակիչները Ալաշկերտի Նահեն գաւառի Զիրոյի, Խամուր, Դալասար և Մանկասար գիւղերից են, ընդամենը 321 տուն. 1298 ար. 1243 իդ.ի միասին՝ 2541 հոգի. Պարապում են երկրագործութեամբ, անամանապահութեամբ և ձկնորսութեամբ: Ունին 2228 դ. 650 ք. ս. վարելահող և 1280 դ. արօտատեղի:

Վերին-Դարձնլըդ. — (62⁰56'55" – 40⁰6'5") : Հնումը կոչւմը էր Վերին Կղնուտ: Ջետեղուած է բլուրների գողաւորութեան մէջ և բնուում է 26 դես. տարածութիւն: Դիւլի արևմտեան կողմում ձգուում է մի ձոր, որի միջով հոսուում է համանուն գլուց: Դիւլն այժմ տարածուում է գէպի այդ կողմը, որովհետև այս մասը հետզդհետէ լայնանում է, և բնակութեան յարմարութիւններ ներկայացնում:

Այս ձորի հարաւային կողմում նկատելի են մի հին ամրոցի պարսպի հիմնապատեր, որին տեղացիները աւանդարար Ըլքերդ են անուանում: Սա այն ամրոցն է եղել, որի մասին Ասողիկ (Բ. Զ.) Թէոփիլոս կայսիր (829 թ.) մասին պատմելիս ասում է. «Սա ի խաղալն իւր յարենելս կոյս ի սահմանս Հայոց առնու զՄուռերդին Հայոց, զԱսաղին և զՄիծիկերտ և զԸլքերդ ի գաւառին Գեղամայ»:

Այս ամրոցի հարաւային կողմը կայ մի կիսաւեր մատուռ՝ ս. Մամաս անուանով, որի մասին պատմում է, թէ Ներսէս Մեծի հետ կեսարիա գնացած Սիւնեաց իշխանները վերադարձին բերել են Մամաս ճգնաւորի մասունքը և այս մատրան տեղում հանգիստ տալով՝ Վայոց—ձորի Քարաղլուխ գիւղի մօտ ամփոփել և վերան վանք կառուցել¹⁾:

Դարձնլըդի բարձրուում կայ մի հին, հասարակ եկեղեցի, որի գաւթում կանգնած են բաւականաշափ խաչարձաններ և մի քանի խոյածն տապանաքարեր: Սրանց վրայի տապանագրերից ուշագրան են.

Այս է հանգիստ Մուքիաս աղին առաջնորդ զիւղիս. թ. ՁԺԸ. (=1519).

Այս է հանգիստ Մովսէսին, որ է քաջ մշակ. թ. ԶՀԱ. (=1522):

¹⁾ Մմրատեան Գեղարքունիք. եր. 539.

Մի խոյածե գերեզմանաքարի վրայ.

Սր խաչս բարեխաւս Զաքարին և կենակցին թվ.
ՌՃԻՔ (=1674).

Գիւղի հարաւային կողմում ևս կայ մի աւեր եկեղեցի, որի հիւսիսային դրան մօտ կանգնեցրած խաչի վրայ կարդացւում է.

'Ի Արհի եպիսկոպոսութեան Տեառն Շմաւոնի Սիւնեաց եպիսկոպոսի, ևս Գրիգորս կանգնեցի զխաչս 'ի փըր-կութիւն հոգւոյ եղբաւրն իմոյ Սամանդիւլին:

Գիւղի արևելեան կողմում էլ կայ մի հին ձիթեհանք, որի հարաւային պատի մէջ դրուած խաչքարի վրայ գրուած է.

Կամաւն Աստուծոյ Ղուկաս և եղբայրն իմ Աւանէս որդի Ներսէսին շինեցաք սրանոցս՝ և վերի ճաղացն Ածսեւքարի մօտ, յիշատակ որդուոյ մերոյ թվին ՌՃ' (=1651).

Վերին Ղարանլուղի բնակիչները ևս հայեր են, Ալաշկերտի Մանկասար, Քուպղրան, Զանգազուր գիւղերից և Ղաթու Արճեշ գաւառակներից 1830 թ. գաղթած. ընդամէնը 269 տուն են, 963 ար. 951 իգ. միասին՝ 1914 հոդի: Պարապմունքը նոյնն է: Ունին 1241 դ. 1200 ք. ս. վարելանող, 1662 դ. 1200 ք. ս. արօտատեղի:

Վերին Ղարանլուղից մօտ Յ կիլոմետր դէպի արեմուտք, գետակի ամբին կայ մի հին գիւղատեղի, ուր այժմ հչ թէ Վերին, այլ Ներքին Ղարանլուղիների անասունների գոմերն են գտնվում: Այստեղ կայ մի կիսաւեր մատուռ, ու մի խաչքարի վրայ արձանագրուած է.

+ Թ. ՌԵԹ (=Վ.620). Եւ ի թագաւորութիւնն Լաշին և ի պատրոնութիւնն մեծի... և զարգանալն Շահնշահի և Աւագին և ի յիշաննութիւնն Վասակայ և որդոյ իւրոյ Բարաքին. Ես Գաջան Լաւուցի կանգնեցի զխաչս վասն հոգո իմոյ փրկութեան եւ ամուսնոյ իմոյ ով կարդայք յիշեցէք ի Քո Տը Ած ողորմի յիրում գալստեանն. ամէն. Եւ զԱրեհամ կրաւնաւորս զկազմողս յիշեցէք ի Քո. Տը Ած ողորմի ամէն.

Այս արձանագրութիւնը կրող խաչքարի մօտ կանգնած են երեք խաչքար, որոնց վրայ ձգուած են ուրիշ երեք խաչքար և այսպիսով կազմել մի նեղ անցք: Որ տանում է դէպի մատուռը:

Մատինա.—(62054°50"—40°4'40"). — Այս գիւղը, հետեւալինը գիւղերի հետ զանւում է Այրիջայի բարձրաւանդակի վրայ, ուր գարնանը երևանի, Շարուր-Դարալազեաղի և Նոր-Բայա-

զէտի գաւառներից տասնեակ հաղարներով քուրդ և թուրք, մասմբ և հայ սարուորներ բարձրանում են իրենց բազմաթիւ նախիրներով և հօտերով, ամբողջ ամառը անցկացնելու Սքանչելի օդը, ալպեան հարուստ բուսականութիւնը, բազմաթիւ սառնորակ, և նոյն իսկ հանգային աղբիւրները թովիչ ազդեցութիւն են գործում: Եռում է կեանքը, սիրային արկածները, մանր և խոշոր գողութիւնները, անսառնների և մանաւանդ արօտատեղիների սահմանների ասիթով ծագած անվերջ աղմուկներն ու կոփւները սորիպում են կառավարութեան այստեղ այդ միջոցին յատուկ ուժիկան և պահակատուն պահելու:

Մատինա բաղկացած է երկու մասից՝ ստորին և վերին, միմեանցից հաղիւ մի կիլոմետր հեռու: Տեղաւորուած են Արդըւլասարի գրեթէ լանջին, Ատիեաման-գետի ձախ ափին: Վերին Մատինան հիմնուել է մի տասնեակ տարի առաջ Ստորին Մատինայի բնակիչներից: Այս վերջին գիւղը բաւական հին է եղել, որովհետև այստեղ կան մի հայկական եկեղեցու հիմնապատեր, և մի քանի խաչքարեր: Երկուսի բնակիչներն էլ շիս թուրքեր են, երևանի Զըդի շրջանից, մօտ 60 տարի առաջ այստեղ գտթած: Ընդամէնը 56 տուն են, 218 ար. 211 իգ. ի միասին 429 հոգի: Պարապում են զլիսաւորապէս անասնապահութեամբ և երկրագործութեամբ:

Քասիկ-բաշ (62° 20' 20"—40° 11' 40").—Գտնում է Մատինա գիւղից փոքր ինչ հարաւ, Ատիեաման գետի աջ ափին: Դիւղի անունը թուրքերէն է և նշանակում է կառավինատեղի, պատմում է, թէ լեզգիների արշաւանքի ժամանակ այստեղ գըլխատել են գերուածներին: Մի աւեր եկեղեցի և մի քանի խաչքար ցոյց են տալիս, որ այստեղ հնումը և գիւղ է եղել: Այժմեան բնակիչները վերաբնակել են այստեղ 1900 թ. Վերին Ղարանլըդ գիւղից, երբ յունապաւանութիւն ընդունեցին: բոլորն էլ հայեր են, 13 տուն: 78 ար. 75 իգ. ի միասին 153 հոգի: Պարապում են անասնապահութեամբ և երկրագործութեամբ:

Քարվանսարա (62° 54' 40"—40° 2' 24"): Զետեղուած է Ատիեաման գետի աջ ափին, այս գաւառից գէպի Վայոց ձորը տանող ճանապարհի վրայ: Գիւղն այսպէս է կոչւում, որովհետև հնումը այստեղ եղել է մի կարաւանատուն, որը այժմ ձիթահանքի է փոխուած: Սրանից մօտ 110 կիլոմետր հեռու գտնուում է նոյն ճանապարհի հոչակաւոր Սելիմի կարաւանատունը: Բնակիչները շիա-թուրքեր են, մօտ 40 տարի առաջ երևանի գաւառի Փոքր Գիւղալար գիւղից գաղթած: Ընդամէնը 33 տուն են.

173 ար. 168 իգ. ի միասին՝ 341 հոդի: Պարապում են անասնապահութեամբ և երկրագործութեամբ:

Եանը (62° 54' 42"—40° 20').—Փռուած է մի բլրի լանջին, առաջնից հոսում է մի վտակ և բացում մի հիանալի տեսարան: Հոսումը ևս զիւղատեղի է եղել, որովհեան կայ մի աւեր եկեղեցի և մի քանի խաչքար, առանց տապահագրերի: Գիւղի բարձրում նկատելի են մի քանի դամբան, որոնցից մինը բնակիչների ասելով, բացուել էր և միջից երկաթէ ապարանջաններ գտնուել: Բնակիչները շիա թուրքեր են և նոյնպիսի քրդեր. թուրքերը գաղթել են մօտ 33 տարի առաջ երեանի գաւառի Սատարակ գիւղից, իսկ բրդերը մօտ 30 տարի առաջ նոյն գաւառի Սութուքիւլան գիւղից: Ընդամենը 52 տուն են. 192 ար. 168 իգ. միասին՝ 360 հոդի: Պարապումնքը նոյնն է:

Խարթլը. (62° 54' 40"—39° 58' 50").—Մի փոքրիկ գիւղ է նեղ հովտի մէջ ընկած և ունի մի հիանալի, սառնորակ աղբիւր: Գիւղի անունը յառաջացել է այն հանգամանքից, որ այստեղ մեծ քանակութեամբ գտնուում է խօթ—սրոցի քար, որը սակայն չի շահագործուում: Այստեղ ևս հին բնակիութեան հետքեր են նկատելի, և փոքր ինչ ներքեն, մի քարաժայուի զինին գեռ ևս մեռում են մի հին պարսպի հիմնապատեր, երեկի պահականց կամ պատահանապատեր է եղել: Գիւղի աները՝ Այրիջի գրեթէ բոլոր թքարնակ գիւղերի տների նման շատ ողորմելի են, բաղկացած մի տանից և գոմից: շատ քչերը ունին նաև գոմի օդա: Ամբողջ գիւղում կայ միայն մի հատ սենեակ՝ փոքրիկ պատուհաններով և մի քակով: Եւ այս մէկ հատիկ սենեակում ապաստանում է ամառուայ ընթացքում սարուրների վրայ վերահսկող ոստիկանը: Խարթլը ի բնակիչները շիա թուրքեր են 30 տարի առաջ Վայոց-ձորի Աղքեանդ գիւղից գաղթած: Ընդամենը 38 տուն են.

139 ար. 121 իգ. ի միասին՝ 260 հոդի: Պարապումնքը նոյնն է:

Ան-տաշ. Տեղաւորուած է Այրիջայի ամենազեղեցիկ և հարթ բարձրաւանդակի վրայ, առջեց հոսում է Այրիջա գետը: Հոսումը այստեղ, ինչպէս երեսում է շինութիւնների հիմքերից, մի մեծ գիւղ, կամ գիւղաքաղաք է եղել, երեկի եկեղեցահարկ ցուցակի մէջ յիշուած Արդիճի կամ Սիմէօն կաթուղիկոսի յիշած երքէճի գիւղը: Կայ մի բաւական մեծ եկեղեցու հիմնապատեր, աղիւսաշէն սենեակների շարքի հետքեր, աների փլուածքային կարկառներ և բաւականաշափ գերեզմաններ:

Բացի սրանցից արեւելեան կողմը բարձրացող բլրի վրայ նկատելի է պարսպի հիմնապատեր, հետևակէս և փոքրիկ ամբոց կամ մարտկոց պիտի եղած լինի: Գիւղի շուրջը կան գերեզ-

մաններ, որոնցից շատերը, և ըստ երկոյթին, հները, փոքրիկ քարերի մինչև երկու մետր տրամագծով համակենտրոն երկու շրջան տնին:

Կան նաև օրօրոցաձև գերեզմանաքարեր, արեւելքից արևմուտք ուղղուած, ինչպէս նաև մի քարէ ձի, նոյնպէս արեւելքից արևմուածք, որի պատճառով և այս տեղը կոչում է Աթ-տաշ. ձի-քարէ: Այս քարէ-ձիու և օրօրոցաձև գերեզմաններից մի քանիսի վրայ կան արաբական տառերով. տապանագրեր, միայն սաստիկ մաշուտած են: Հազի Յ կիլոմետր այստեղից հեռու, նոյն հարթութեան վրայ կայ մի երկաթա-ծծմբային սառն աղբիւր, որից օգուտում են սարւորները լողանալով կամ խմելով: Սրա ժօտ գտնւում է մի պահակատուն:

Առաւելապէս այս հարթութեան վրայ ամառները հաւաքուում են 10—15 հազար սարւորներ երևանի, Շարուր—Դարալազեպի և Հին Նախիշեանի գաւառի թուրքեր և քրդեր, ինչպէս և երևանի գաւառի Դաւալու գիւղի հայեր:

Վերջին տաճամեմակում զանազան կողմերից եկած 32 տուն քրդեր բնակութիւն են հաստատել Աթ-տաշի մօտ, աւերակ եկեղեցու շուրջը, գետի ափին, և խնդրել են կառավարութիւնից՝ իրենց բնակավայրը գիւղ համարել Աթ-տաշ անունով, սակայն դեռ ևս կառավարութիւնը չէ հաստատել. այս քրդերը բոլորն էլ հայերէն գիտեն, որովհետև մեծ մասամբ Նոր-Բայազէտի գաւառի զանազան գիւղերում նախրորդութիւն անողներն են: Սրանց բնակավայրում Նոր-Բայազէտացիները հիմնել են հինգ խանութ, ամառուայ ընթացքում սարւորների հետ առևտուր անելու:

Ըղսաղ-Թոյիւղ.—Մի հին գիւղատեղի է Այրիջա-դետի ձախ ափին, ուր կայ երկաթածմբային սառն աղբիւր: Այս գիւղատեղումն էլ նկատելի է մի աւեր եկեղեցի:

Այս գիւղատեղուց վոքր ինչ արևելահարաւ գտնւում է մի ժայռ, որ կոչում է Նաղարախանաւ: Առջնից հոսում է մի վտակ, որ նոյն անունն է կրում և թափւում է Այրիջա-գետի մէջ: Այս ժայռի մէջ կայ մի մեծ, բնական քարայր, և ներքենում մի հին, աւեր եկեղեցի, որ յայտնի է ո. Վարդան անունով:

Քիւլինա:—Մի հին գիւղատեղի է Խքիջիլար լերան ստորատում, ուր նկատելի են մի եկեղեցու, ջրաղացի և տների հետքեր: Այժմ երևանի գաւառի Թիւլ-Թափա գիւղի Փիրիքի քրդերը եկել բնակութիւն են հաստատել այստեղ և խնդրել են պետութիւնից իբր գիւղ ճանաչել, սակայն դեռ ևս հաստատութիւն չէ ստացուած:


Ղըզըլ-Խարապա:—($62^{\circ}48'35''$ — $40^{\circ}3'50''$).—Մի փոքրիկ գիւղ

է, 1 դ. 1200 ք. ս. տարածութեամբ, տեղաւորուած մի քարաժայոի գագ-սթին, որի միջից բղխում են մի քանի սառնորակ աղբիւրներ՝ և միանալով դարձնում 2—3 ջրաղաց։ Այստեղից մի նեղ ճանապարհ տանում է մինչև Երեան քաղաքը։ Այստեղի հողը չափազանց արգաւանդ է, այս պատճառով էլ զիւդատեղին Ղըզը խարապա-սոսկի զիւդատեղի է կոչուել։ Սա ևս հայկական հին դիւզ է եղել, որովհետև կայ մի կիսաւեր եկեղեցու գերեզմանա-տուն, սակայն առանց տապանագրերի։

Գիւղի բնակիչները շիա-թուրքեր են. ընդամէնը 25 տուն, 112 ար. 103 իգ. միասին՝ 215 հողի։ Պարապմունքը նոյնն է. Ունին 269 դ. 1870 ք. ս. վարելահող, 170 դ. խոտանեղի և 614 դ. 760 ք. ս. արօտատեղի։

Սըշանլու կամ Սհմէտալի. — Զետեղուած է համանուն լեռան լանջին. Գիւղի հարաւային և հիւսիսային կողմերից հոսում են մի մի վտակ, որոնք զիւղի ստորոտում միանալով կազմում են Սըշանլու գետակը։ Գիւղում կայ մի աւեր եկեղեցի; Բնակիչները շիա-քրդեր են. Ընդամէնը 47 տուն. 251 ար. 248 իգ. միասին՝ 499 հողի։ Պարապում են անամնապահութեամբ և երկրագործու-թեամբ։





Ново-Баязетъ.

Նոր-Բայազէտ քաղաք.

La ville de Novo-
Bayazèt.